

---

**Գաղտնիության գործելակերպերի ծանուցում**

Գաղտնիության գործելակերպերի այս համատեղ ծանուցման (Ծանուցում) մեջ նկարագրվում է, թե ինչպես կարող են օգտագործվել և հրապարակվել Ձեր առողջական տվյալները, և թե ինչպես կարող են դրանք հասանելի լինել Ձեզ: Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ: Սույն Ծանուցումը Ձեզ է տրամադրվում **Providence Health & Services (Providence)**, նրա բժշկական անձնակազմի և այլ ծառայություն մատուցողների կողմից (հետայսու միասնաբար վկայակոչված՝ «մենք» կամ «մեր»):

***Providence-ը պարտավորվում է պահպանել Ձեր առողջական տվյալների գաղտնիությունը:***

Մենք պարտավոր ենք օրենքով սահմանված կարգով երաշխավորել Պաշտպանման ենթակա առողջական տվյալների (սովորաբար կոչվում է ՊՍՏ/ՓԻ կամ առողջական տվյալներ) գաղտնիությունը, այդ թվում՝ ՊՍՏ-ը էլեկտրոնային տարբերակով: Մեզանից նաև պահանջվում է Ձեզ տեղեկացնել մեր իրավական պարտականություններին և Ձեր առողջական տվյալների գաղտնիության պահպանման գործելակերպերին և հետևել սույն Ծանուցման մեջ ընդգրկված այդ գործելակերպերին, եթե կիրառելի չեն ավելի խիստ օրենսդրություն կամ կանոնակարգեր: Այս Ծանուցումը վերաբերում է Providence-ի բոլոր հաստատություններին, ծառայություններին և ծրագրերին, որոնք Ձեզ առողջապահական ծառայություն են տրամադրում:

**Սույն Ծանուցման կիրառումը**

Սույն Ծանուցման մեջ նկարագրված տեղեկատվության գաղտնիության գործելակերպերին պետք է հետևեն՝

- Առողջապահության ոլորտի ցանկացած մասնագետ, ով բուժում է Ձեզ մեր որևէ տեղամասում:
- Բոլոր հաստատությունները, բաժինները և բաժանմունքները, այդ թվում՝ հիվանդանոցները, վիրաբուժական կենտրոնները, տնային խնամք տրամադրողները, կլինիկաները և այլ գործակիցներ:
- Ողջ աշխատուժը, ինչպես՝ աշխատակիցներ, բուժանձնակազմ, պրակտիկանտներ, ուսանողներ, կամավորներ և այլ անձինք, ովքեր ենթակա են մեր ուղղակի վերահսկողությանը՝ անկախ վճարվում են մեր կողմից թե ոչ:
- Այլ առողջապահական ծառայություններ մատուցողներ, ովքեր համաձայնել են հետևել Գաղտնիության գործելակերպերի այս ծանուցմանը:

Սույն Ծանուցման մեջ տրամադրվում է մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես մենք կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեր առողջական

տվյալները՝ թույլտվությամբ կամ առանց թույլտվության, ինչպես նաև Ձեր առողջական տվյալների առնչությամբ Ձեր որոշակի իրավունքների մասին այլ տեղեկատվություն:

***Ձեր առողջական տվյալների օգտագործումը և հրապարակումը, որ կարող ենք կատարել առանց Ձեր թույլտվության:***

**Ձեզ հետ կապվելու նպատակով.** Ձեր տվյալները կարող են օգտագործվել Ձեզ հետ կապվելու և հանդիպումների մասին հիշեցնելու, բժշկական հետազոտության արդյունքները տրամադրելու, բուժման տարբերակների մասին Ձեզ տեղեկացնելու կամ առողջապահական այլ արտոնությունների և ծառայությունների մասին Ձեզ խորհուրդ տալու նպատակով:

**Բուժում.** Ձեր տվյալները կարող են տրամադրվել Ձեզ առողջապահական ծառայություններ մատուցող անկախ և հաստատության: Սա ներառում է Ձեր առողջապահական ծառայության համակարգումն այլ առողջապահական ծառայություններ մատուցողների հետ և այլ առողջապահական ծառայություններ մատուցողների համար ուղեգիր տալը: Ձեր բուժման նպատակով Ձեր տվյալների կարիքն ունեցող առողջապահական ծառայություններ մատուցողների թվում են՝ Ձեր բժիշկը, դեղագործը, բուժքույրը և այլ առողջապահական ծառայություններ մատուցողներ, ինչպիսիք են՝ ֆիզիոթերապևտները, տնային պայմաններում առողջապահական ծառայություն մատուցողները և ռենտգեն տեխնիկները: Մենք կարող ենք տրամադրել Ձեր տվյալներն էլեկտրոնային եղանակով Ձեզ առողջապահական ծառայություններ մատուցողներին՝ երաշխավորելու, որ նրանք տիրապետում են Ձեր տվյալներին՝ Ձեզ հնարավորինս արագ բուժելու նպատակով:

Մենք կարող ենք տրամադրել Ձեր առողջական տվյալները ընտանիքի ցանկացած անդամի կամ ընկերոջ, ով ընդգրկված է Ձեր առողջապահական ծառայություններին աջակցելու գործում: Մենք դա կանենք, եթե միայն Դուք համաձայն եք կամ չեք առարկում, և նրանց կտրամադրենք միայն այն տեղեկատվությունը, որը նրանց անհրաժեշտ է Ձեզ օգնելու համար: Եթե Դուք ի վիճակի չեք համաձայնել և/կամ առարկել տվյալների տրամադրման նման եղանակին, մենք կարող ենք Ձեր առողջական տվյալները տրամադրել ըստ անհրաժեշտության, եթե մենք որոշենք, որ դա ելնում է Ձեր շահերից՝ հիմնվելով մեր մասնագիտական դատողության վրա: Ձեր մահվան դեպքում մենք կարող ենք տրամադրել առողջական տվյալները ընտանիքի անդամի, բարեկամի կամ մեկ այլ անձի, ով ներգրավված է եղել Ձեր առողջապահական ծառայությունների կամ դրանց համար վճարումների գործում, եթե դա չի հակասում նախապես Ձեր արտահայտած նախընտրություններին:

**Վճարում.** Ձեր առողջապահական ծառայությունների համար վճարում ստանալու նպատակով մենք կարող ենք ստիպված լինել Ձեր առողջական տվյալները տրամադրել վճարման համար պատասխանատու կողմին, ներառյալ՝ Մեդիքերը, Մեդիքեյդը (պետական առողջապահական պլան) կամ Ձեր ապահովագրական

ընկերությունը: Ձեր ապահովագրական ընկերությունը կամ առողջապահական պլանը կարող է Ձեր տվյալների կարիքն ունենալ այնպիսի գործունեության համար, ինչպես օրինակ՝ փոխհատուցման Ձեր իրավասության որոշումը, Ձեզ տրամադրված առողջապահական ծառայությունների բժշկական անհրաժեշտության վերանայումը կամ հիվանդանոցային ծառայությունների կամ հիվանդանոցում մնալու թույլտվությունը:

**Առողջապահական գործառնություններ.** Ձեր առողջական տվյալները կարող են օգտագործվել օժանդակելու մեր աշխատանքային գործունեությանը և երաշխավորելու, որ տրամադրվում են որակյալ առողջապահական ծառայություններ: Այս գործունեությունների թվում են՝ որակի գնահատումները, գործընկերների կամ աշխատակիցների վերանայումը, բժշկական անձնակազմի վերապատրաստումը, արտոնագրումն ու հավաստագրումը, տվյալների ընդհանրացումը և աուդիտները՝ կանոնակարգող գերատեսչությունների կողմից:

Մենք կարող են տրամադրել Ձեր ՊԱՏ-ը երրորդ կողմերին, ովքեր իրականացնում են այնպիսի ծառայություններ, ինչպես՝ տրանսկրիպցիան կամ հաշիվների առաքումը: Նման դեպքերում մենք ունենք գրավոր համաձայնագրեր երրորդ կողմերի հետ առ այն, որ նրանք չեն օգտագործի կամ հրապարակի Ձեր առողջական տվյալները՝ բացառությամբ օրենքով թույլատրելի դեպքերի:

Մենք նաև կարող ենք օգտագործել Ձեր տվյալները (անուն, հասցե, ծննդյան ամսաթիվ, ծառայության բաժին, բուժող բժիշկ, բուժման ամսաթվեր, արդյունք) դրամահավաքի նպատակով: **Դուք իրավունք ունեք հրաժարվել նման հաղորդակցություն ստանալուց:** Եթե Դուք չեք ցանկանում ստանալ այս նյութերը, խնդրում ենք կապվել մեր հիմնադրամի գրասենյակի հետ և խնդրել, որ նյութերը Ձեզ չուղարկվեն:

Եթե Դուք չեք առարկում, Ձեր անունն ու գտնվելու վայրը կարող են ներառվել մեր հիվանդների տեղեկագրքում: Ընդգրկվելու դեպքում մենք կտրամադրենք միայն խիստ սահմանափակ տեղեկատվություն Ձեր մասին (ինչպես օրինակ՝ հիվանդանոցում Ձեր գտնվելու վայրը և ընդհանուր վիճակը) յուրաքանչյուրին, ով Ձեր մասին կհարցնի նշելով Ձեր անունը: Եթե Դուք նախընտրում եք հայտնել Ձեր կրոնական պատկանելությունը և չեք առարկում, ապա մենք կարող ենք տրամադրել Ձեր անունն ու սենյակի համարը Ձեր հավատքի կամ կրոնական համայնքի հոգևորականներին:

Այս Ծանուցման մեջ նկարագրվում են նաև Կազմակերպված առողջապահական պայմանավորվածության («ԿԱՊ»/«ՕՒՀԱ») գաղտնիության գործելակերպերը մեր և որոշակի իրավասու առողջապահական ծառայություններ մատուցողների և կազմակերպությունների միջև: ԿԱՊ-ը թույլ է տալիս իրավաբանորեն առանձին փոխհատուցվող սուբյեկտներին օգտագործել և տրամադրել ՊԱՏ-ը՝ պայմանավորվածության համատեղ իրականացման նպատակով: Մենք մասնակցում ենք այն առողջապահական կազմակերպությունների նմանօրինակ

պայմանավորվածություններին, որոնք համաձայնել են աշխատել միմյանց հետ՝ նպաստելու Ձեր խնամքին առնչվող առողջական տվյալների մատչելիությանը: Օրինակ, եթե Դուք ներկայանում ենք հիվանդանոց շտապ օգնության նպատակով և չէք կարող տրամադրել Ձեր առողջության վերաբերյալ կարևոր տեղեկատվություն, ապա ԿԱՊ-ը մեզ թույլ կտա օգտագործել Ձեր ՊԱՏ-ը մեր ԿԱՊ-ի մասնակիցների կողմից՝ Ձեզ բուժելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում Ձեր ՊԱՏ-ի մատչելիությունը ենթադրում է ավելի լավ առողջապահական ծառայություններ Ձեզ համար: Մենք պահում ենք մեր հիվանդների առողջության վերաբերյալ տեղեկատվությունը համատեղ էլեկտրոնային առողջապահական արձանագրություններում՝ այլ առողջապահական ծառայություններ մատուցողների հետ միասին, ովքեր մասնակցում են այս ԿԱՊ-ին: Ձեր առողջական տվյալները պետք է ազատորեն մատչելի լինեն Providence-ի և ԿԱՊ-ի անդամների համար՝ բուժման, վճարումների և առողջապահական գործառնությունների նպատակով: Այս իսկ նպատակով մենք ստեղծել ենք ԿԱՊ-ը և այս Համատեղ ծանուցումը: ԿԱՊ-ի անդամները կարող են նախընտրել ունենալ իրենց սեփական Ծանուցում(ներ)ը: Մեր ԿԱՊ-ում մասնակցող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով խնդրում ենք դիմել սույն Ծանուցման մեջ նշված Տվյալների գաղտնիության հարցերով գրասենյակ (Privacy Office):

***Օգտագործման և հրապարակմանայլ ձևեր, որ կարող ենք կատարել առանց Ձեր թույլտվության***

Կան մի շարք ձևեր, որոնցով կարող են օգտագործվել կամ հրապարակվել Ձեր առողջական տվյալները՝ առանց Ձեր թույլտվության: Սովորաբար այս օգտագործումը և հրապարակումը պահանջվում են օրենքով կամ հանրային առողջապահության և անվտանգության նկատառումներով:

**Երբ պահանջվում է օրենքով.** Մենք կարող ենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տվյալները, երբ դա պահանջվում է օրենքով: Այդ դեպքում, մենք կհետևենք օրենքին և կհրապարակվել միայն անհրաժեշտ տեղեկատվություն:

**Հանրային առողջապահություն.** Մենք կարող ենք հրապարակել Ձեր առողջական տվյալները հանրային առողջապահական որևէ մարմնի՝ հանրային առողջապահական գործունեության նպատակով: Հանրային առողջապահական միջոցառումները ներառում են հիվանդության, վնասվածքի, հաշմանդամության կանխարգելումը կամ վերահսկումը, ինչպես նաև չարաշահման, անփութության կամ ներընտանեկան բռնության վերաբերյալ բողոքներին արձագանքումը: Մենք կարող ենք Ձեր առողջական տվյալները հրապարակել որևէ անձի կամ գործակալության, որը պարտավոր է զեկուցել անբարենպաստ իրադարձությունների, ապրանքների թերությունների կամ խնդիրների, ապրանքի կենսաբանական շեղումների կամ ապրանքները հետ կանչելու, վերանորոգելու կամ փոխարինելու վերաբերյալ:

Տվյալների նման բնույթի հրապարակումը կատարվելու է նահանգային և դաշնային օրենսդրությանը համապատասխան:

**Առողջության վերահսկողություն.** Մենք կարող ենք հրապարակել Ձեր առողջական տվյալները առողջության վերահսկողություն իրականացնող գերատեսչություններին՝ օրենքով լիազորված վերահսկողական միջոցառումներ, ինչպես օրինակ՝ աուդիտներ, հետաքննություններ և ստուգումներ իրականացնելու նպատակով: Առողջության վերահսկողություն իրականացնող գերատեսչությունների թվում են պետական այն գերատեսչությունները, որոնք վերահսկում են առողջապահական համակարգը, պետական նպաստների ծրագրերը, պետական կանոնակարգող ծրագրերն ու քաղաքացիական իրավունքները:

**Իրավական վարույթներ.** Մենք կարող ենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տվյալներն ի պատասխան դատարանի վարչական հրամանի՝ վարչական կամ դատական վարույթում կամ ի պատասխան դատական ծանուցագրի, բացահայտման խնդրանքի կամ իրավական այլ գործընթացի:

**Օրենքի կատարում.** Մենք կարող ենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տվյալներն օրենքի կատարման նպատակներով: Նման օրինակների թվում են՝ (1) իրավական գործընթացներին արձագանքում, (2) սահմանափակ տեղեկատվության տրամադրում՝ կասկածյալին պարզելու կամ հայտնաբերելու նպատակով, (3) հանցագործության զոհերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում, (4) քրեածին մահվան դեպքի կասկածի հաղորդում, (5) մեր կառույցի ներսում կատարված հանցագործության մասին հաղորդում, և (6) բժշկական արտակարգ իրավիճակներում հավանական հանցագործության մասին հաղորդում:

**Լուրջ սպառնալիքի կանխարգելում.** Մենք կարող ենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տվյալները, եթե բարեխղճորեն կարծում ենք, որ դրանց օգտագործումը կամ տրամադրումն անհրաժեշտ է որևէ անձի կամ հասարակության առողջության կամ անվտանգության նկատմամբ լուրջ և անմիջական վտանգի կանխարգելման կամ մեղմման համար: Տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն նշված սպառնալիքը ողջամտորեն կանխարգելելու կամ նվազեցնելու ունակ անձին:

**Դատաքննիչներ, հուղարկավորման կազմակերպիչներ և օրգանների նվիրատվություն.** Մենք կարող ենք հրապարակել Ձեր առողջական տվյալները որևէ դատաքննիչի կամ բժշկական քննություն իրականացնողի՝ նույնականացման նպատակներով, մահվան պատճառը որոշելու կամ օրինականորեն պահանջվող պարտականությունների կատարման նպատակով: Մենք կարող ենք հրապարակել Ձեր առողջական տվյալները հուղարկավորման կազմակերպիչին, որպեսզի նրան հնարավորություն ընձեռենք կատարելու իր պարտականությունները: Մենք կարող ենք Ձեր տվյալները հրապարակել՝ որևէ օրգանի, աչքի կամ հյուսվածքի նվիրատվությունը դյուրին դարձնելու նպատակով:

**Հետազոտություններ.** Մենք կարող ենք Ձեր առողջական տվյալները հրապարակել հետազոտողներին, եթե հետազոտությունը հաստատվել է կազմակերպության էթիկայի հանձնաժողովի և/կամ Տվյալների գաղտնիության հարցերով խորհրդի (PrivacyBoard) կողմից, և հետազոտության արձանագրությունները հաստատվել են՝ Ձեր տվյալների գաղտնիության երաշխավորմամբ: Մենք կարող ենք տրամադրել առողջապահական տեղեկատվություն Ձեր մասին այնպիսի անձանց, ովքեր պատրաստվում են հետազոտական ծրագիր իրականացնել:

**Ռազմական գործունեություն և ազգային անվտանգություն.** Մենք կարող ենք հրապարակել Ձինված ուժերի անձնակազմի առողջական տվյալները (1) այնպիսի գործունեությունների համար, որոնք համարվում են անհրաժեշտ ըստ զինվորական հրամանատարության համապատասխան մարմինների (2) Վետերանների հարցերով դեպարտամենտի կողմից նպաստների համար Ձեր իրավասությունը որոշելու նպատակով, կամ (3) օտարերկրյա ռազմական իշխանությանը, եթե Դուք այդ օտարերկրյա ռազմական ծառայության անդամ եք: Մենք կարող ենք նաև Ձեր առողջական տվյալները հրապարակել լիազորված դաշնային գործակալներին՝ պետական անվտանգության և հետախուզական գործունեություն իրականացնելու, այդ թվում՝ Նախագահին պաշտպանական ծառայություններ մատուցելու նպատակով, կամ այլոց, ովքեր օրինականորեն լիազորված են տեղեկատվություն ստանալ:

**Բանտարկյալներ/ձերբակալվածներ.** Մենք կարող ենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տվյալներն ուղղիչ որևէ հաստատության կամ իրավապահ պաշտոնյայի, եթե Դուք ուղղիչ հիմնարկի բանտարկյալ եք կամ ձերբակալված եք, և տվյալներն անհրաժեշտ են Ձեզ բուժելու կամ Ձեր, ուղղիչ հիմնարկի այլ բանտարկյալների, աշխատակիցների և այլոց առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար:

**Աշխատողների փոխհատուցում.** Մենք կարող ենք օգտագործել կամ հրապարակել Ձեր առողջական տվյալներն անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների փոխհատուցման օրենքների և նմանօրինակ այլ օրինական ծրագրերի իրագործման նպատակով:

**Աղետների հետևանքների վերացում.** Մենք կարող ենք հրապարակել Ձեր մասին առողջապահական տեղեկատվություն որևէ անձի, ով օգնություն է ցուցաբերում աղետի հետևանքների վերացման ջանքերին, որպեսզի Ձեր ընտանիքը և ընկերները կարողանան տեղեկացվել Ձեր վիճակի, դրության և գտնվելու վայրի մասին:

***Ձեր առողջական տվյալների օգտագործումը և հրապարակումը, որ կարող ենք կատարել Ձեր թույլտվությամբ***

Ձեր առողջական տվյալների որոշակի օգտագործումը և հրապարակումը, այդ թվում՝ մարկետինգը (շուկայավարում), վաճառքը կամ հոգեթերապիայի նշումների բաց

թողումը կատարվի միայն Ձեր գրավոր թույլտվության դեպքում: Դուք կարող եք ցանկացած ժամանակ գրավոր կերպով չեղյալ համարել Ձեր թույլտվությունը՝ բացառությամբ այն գործողությունների, որոնք արդեն ձեռնարկել ենք առկա թույլտվության հիման վրա:

Սույն Ծանուցման մեջ չնկարագրված օգտագործումը և հրապարակումը այլապես կիրականացվի միայն Ձեր գրավոր համաձայնությամբ:

Դաշնային և նահանգային օրենքները կարող են լրացուցիչ սահմանափակումներ դնել Ձեր առողջական տվյալների տրամադրման վրա՝ թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահումից բուժման ծրագրերի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կամ հոգեկան առողջապահական ծրագրերի համար: Օրենքով պահանջվելու դեպքում մենք ձեռք կբերենք Ձեր թույլտվությունը նման բնույթի տեղեկատվություն բաց թողելուց առաջ:

### ***Ձեր իրավունքները***

**Սահմանափակումներ պահանջելու իրավունք.** Դուք իրավունք ունեք խնդրել մեզ սահմանափակել այն ձևը, որով մենք օգտագործում կամ հրապարակում ենք Ձեր առողջական տվյալները՝ բուժման, վճարման կամ առողջապահական ծառայությունների նպատակով: Մենք նկատի կառնենք Ձեր խնդրանքը, սակայն պարտավոր չենք համաձայնել տվյալ սահմանափակման հետ (բացառությամբ ստորև նկարագրված դեպքերի): Եթե մենք համաձայնենք որևէ սահմանափակման, ապա չենք օգտագործի կամ տրամադրի Ձեր առողջական տվյալները՝ խախտելով այդ սահմանափակումը, եթե միայն դա անհրաժեշտ չէ արտակարգ իրավիճակում: Եթե սահմանափակումն այլևս հնարավոր չէ, մենք Ձեզ կտեղեկացնենք այդ մասին:

**Առողջապահական պլաններին տեղեկատվության հրապարակումը սահմանափակելու իրավունք.** Դուք կարող եք գրավոր խնդրել ծառայություն ստանալու ընթացքում, որպեսզի մենք չհրապարակենք տեղեկատվություն առողջական պլաններին, եթե Դուք լրիվ վճարել եք որևէ իրի կամ ծառայության համար ձեր գրպանից: Մենք պետք է համաձայնենք չհրապարակել այս տեղեկատվությունը Ձեր առողջապահական պլանին, եթե բավարարված են որոշակի պայմաններ:

**Գաղտնի հաղորդակցություններ.** Մենք կհարմարվենք Ձեզ հետ Ձեր առողջական տվյալների շուրջ տարբեր մեթոդներով կամ այլընտրանքային վայրերում հաղորդակցվելու Ձեր տրամաբանական խնդրանքներին: Օրինակ, երբ Դուք ունեք առողջապահական պլանի ապահովագրություն, բայց բաժանորդագրվողը չէք, և կցանկանաք, որպեսզի Ձեր առողջական տվյալներն ուղղարկվեն ոչ բաժանորդագրվողի հասցեին, մենք սովորաբար կարող ենք դա անել Ձեզ համար:

**Ծանուցում խախտման մասին.** Դուք իրավունք ունեք ծանուցում ստանալ Ձեր առողջական տվյալների նկատմամբ ոտնձգությունների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով:

**Ձեր առողջական տվյալների մատչելիությունը.** Դուք իրավունք ունեք ստանալ մեզ մոտ պահվող՝ Ձեր առողջական տվյալների պատճենը որոշ սահմանափակ բացառություններով: Դուք կարող եք պահանջել, որպեսզի Ձեր տվյալները Ձեզ հասանելի դարձվեն գրավոր և կարող եք պահանջել Ձեր տվյալների պատճենը էլեկտրոնային տարբերակով: Մեզ իրավունք է վերապահվում տրամաբանականվճար գանձել Ձեր առողջական տվյալների ձևակերպման և տրամադրման ծախսերի համար: Դուք իրավունք ունեք պահանջելու, որ Ձեր առողջական տվյալներն ուղարկվեն ցանկացած անձի կամ սուբյեկտի, ինչպես՝ այլ բժշկի, խնամողի կամ առողջական անձնական գործի առցանց շտեմարանի:

**Փոփոխությունները Ձեր առողջական տվյալներում.** Դուք իրավունք ունեք մեզ խնդրել փոփոխել Ձեր առողջական ցանկացած տվյալ: Դուք պետք է այս փոփոխության համար գրավոր դիմում ներկայացնեք տվյալ կազմակերպության բժշկական արձանագրությունների բաժին: Մենք կարող ենք մերժել Ձեր խնդրանքը որոշակի իրավիճակներում, ինչպես օրինակ այն դեպքում, երբ Ձեր առողջական տվյալների մասին արձանագրությունները ստեղծվել են այլ ծառայություններ մատուցողի կողմից, կամ եթե մենք որոշենք, որ Ձեր տվյալները ստույգ և ամբողջական են: Ցանկացած մերժում կլինի գրավոր: Դուք իրավունք ունեք բողոքարկել մեր մերժումը՝ անհամաձայնության մասին գրավոր հայտարարություն ներկայացնելու միջոցով:

**Տվյալների հրապարակման մասնավոր դեպքեր.** Դուք իրավունք ունեք ստանալ մեր կողմից Ձեր առողջական տվյալների հրապարակման դեպքերի ամբողջական ցուցակը՝ բացառությամբ բուժման, վճարման կամ առողջապահական միջոցառումների նպատակով կամ ըստ Ձեր թույլտվության հրապարակվող դեպքերի: Այդ ցուցակում սովորաբար ընդգրկված են այն դեպքերը, երբ տվյալները ներկայացվում են հանրային առողջապահության նկատառումներով պարտադրված, իրավապահական, դատավարական նպատակներով կամ պարտադիր հաշվառումների նպատակով, ինչպիսիք են ծննդյան և մահվան վկայականները:

**Ձեր իրավունքների իրականացումը.** Վերոնշյալ իրավունքներից որևէ մեկն իրականացնելու նպատակով, կամ եթե Ձեզ անհրաժեշտ է Ձեր առողջական տվյալները տրամադրել որևէ մեկին այլ նպատակներով, որոնք տարբերվում են այստեղ նշված նպատակներից, կարող եք դիմել բժշկական արձանագրությունների համապատասխան բաժին:

### ***Հարցեր և բողոքներ***

Եթե Դուք ունեք հարցեր, կամ մտահոգված եք, որ Ձեր անձնական կյանքի պաշտպանության իրավունքը որևէ առումով խախտվել է, կարող եք դիմել Տվյալների գաղտնիության հարցերով մեր պատասխանատուին՝ **1-800-510-3375** հեռախոսահամարով: Դուք նաև իրավունք ունեք բողոքելու Առողջապահական և մարդկանց ծառայությունների հարցերով քարտուղարին՝



**Office for Civil Rights (Քաղաքացիական իրավունքների գրասենյակ) – AK, WA, OR, MT**

U.S. Department of Health and Human Services  
2201 Sixth Avenue - M/S: RX-11  
Seattle, WA 98121-1831

**Office for Civil Rights (Քաղաքացիական իրավունքների գրասենյակ) – CA**

U.S. Department of Health and Human Services  
90 7<sup>th</sup> Street, Suite 4-100  
San Francisco, CA 94103

Ձեզնից վրեժխնդիր չեն լինի բողոք ներկայացնելու համար:

**Փոփոխություններ Գաղտնիության գործելակերպերի համատեղ ծանուցման մեջ**

Մենք վերապահում ենք մեր Ծանուցման պայմաններում ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարելու իրավունքը: Ծանուցման նոր դրույթներն ուժի մեջ կմտնեն մեր կողմից պահվող առողջական ողջ տեղեկատվության համար: Դուք կարող եք ծանոթանալ մեր Ծանուցման առավել թարմ (ընթացիկ) տարբերակին մեր ինտերնետային կայքում՝ [www.providence.org](http://www.providence.org), կամ ցանկացած ժամանակ խնդրել վերջին տարբերակի պատճենը բժշկական արձանագրությունների բաժնից, տվյալների գաղտնիության հարցերով պատասխանատուից կամ գրանցող անձնակազմից: